



**Կապանի Օրհուս կենտրոնի 2013թ.
կատարած աշխատանքների տարեկան
հաշվետվություն
/հունվար-նոյեմբեր/**

Գործունեության եզրափակիչ հաշվետվություն

1. Նախարան և ընդհանուր տեղեկություններ ծրագրի մասին

Կապանի բնապահպանական տեղեկատվության հասարակական (Օրինա) կենտրոնը 2013թ. իր աշխատանքային գործունեությունը սկսել է փետրվարի 4-ին:

Հաշվետու ժամանակահատվածում Կապանի բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի մասնակցությամբ, կենտրոնում և կենտրոնի նախաձեռնությամբ անցկացվել է 76 միջոցառում:

Ստորև ներկայացվում է դրանց բաշխումը ըստ հանդիպումների տարատեսակների.

Միջոցառում Քանակ 76

| Անվանումը | քանակը | տոկոս |
|---|--------|-------|
| Հասարակական և կլոր սեղան-քննարկումներ | 14 | - |
| Հանրային լսումներ | 3 | - |
| Գործնական աշխատանքներ և արձագանքներ | 4 | - |
| Այցելություններ, աշխատանքային և խորհրդատվական հանդիպումներ | 32 | - |
| Դասընթացներ, սեմինար-քննարկումներ էկոկրթական միջոցառումներ | 15 | - |
| Շնորհանդես | 3 | - |
| Միջազգային հանդիպումներ, սեմինարներ | - | - |
| Փորձագիտական խորհրդի նիստեր | 5 | - |
| Տարվա ընթացքում կենտրոնի այցելուների ընդհանուր քանակը | 944 | - |
| ՀԿ ներկայացուցիչները | - | 41.5% |
| պատանիներն ու երիտասարդներ | - | 18.9% |
| ԶԼՄ ներկայացուցիչներ | - | 10.1% |
| տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման մարմինների, այլ պետական կառույցների ներկայացուցիչները, գործարարներ | - | 29.1% |
| Այլ /շահագրգիռ քաղաքացիներ/ | - | 0.4% |

Կենտրոնի ծառայություններից օգտվողների քանակը

Հաշվետու ժամանակահատվածում կազմել է 277 մարդ:

Ըստ ամիսների Կենտրոնի ծառայություններից օգտվողների քանակը 277

| Ըստ ամիսների | Կենտրոնի ծառայություններից օգտվողների թիվը | | | | | Ընդամենը ամսվա ընթացքում |
|-----------------|--|-----------|------------------|--------------|---------------|--------------------------|
| | Գրադարան | Տեսադարան | Տպիչ, պատճենահան | Ինտերնետ կապ | Հեռախոս, ֆաքս | |
| Հունվար | - | - | - | - | - | - |
| Փետրվար | 6 | 2 | 8 | 8 | - | 24 |
| Մարտ | 8 | 3 | 8 | 11 | - | 30 |
| Ապրիլ | 6 | 2 | 12 | 2 | - | 22 |
| Մայիս | 7 | 2 | 14 | 3 | - | 26 |
| Հունիս | 8 | 0 | 16 | 4 | - | 28 |
| Հուլիս | 1 | - | 3 | 3 | - | 7 |
| Օգոստոս | 2 | - | 5 | 7 | - | 14 |
| Սեպտեմբեր | 6 | 5 | 30 | 7 | - | 48 |
| Հոկտեմբեր | 7 | 3 | 22 | 9 | - | 41 |
| Նոյեմբեր | 5 | 4 | 23 | 5 | - | 37 |
| Դեկտեմբեր | - | - | - | - | - | - |
| Ընդամենը | 56 | 21 | 141 | 59 | | 277 |

ԶԼՄ-ների հետ համագործակցություն /թերթեր, TV-ներ, ծրագրեր, հաղորդումներ/ Կապանի Օրհուս կենտրոնի բոլոր միջոցառումներին հրավիրվում են “Արմենպրես”-ի Կապանի թղթակիցը, “Առավոտ”, “Սյունյաց երկիր” թերթերի լրագրողները, “ՍՈՄԻ” և “Խուստուփ” հեռուստարձկերությունները, որոնք լուսաբանում են կենտրոնում տեղի ունեցող միջոցառումները: 2013թ. տրվել է հաղորդումներ ավելի քան 28 հաղորդում:

Տեղի է ունեցել փորձագետների խորհրդի նիստ 4 նիստ: Առաջին նիստում քննարկվել է տարեկան աշխատանքային պլանը: Երկրորդ նիստը կայացավ հունիսի 28-ին: Քննարկվեց Կապանի խմելու ջրի ջրահավաք ավազանին սպառնացող վտանգների և ընդհանրապես խմելու ջրի որակին, որը ավելի է վատանում մասնավորապես անձրևոտ օրերին: Օգոստոսի 28-ին քննարկվել է “Շահումյանի հանքավայրի հնարավոր բաց եղանակով նախագծի վերաբերյալ

կազմակերպել հանրային քննարկում և հրավիրել Սյունիքի մարզպետարանի, Կապանի ավագանիների, քաղաքապետարանի, պետական և ոչ պետական բոլոր կառույցների, գիտական, կրթական ոլորտների և ՁԼՄ ներկայացուցիչներ, լսելու նրանց դիրքորոշումը տվյալ խնդրի վերաբերյալ:

Հոկտեմբերի 25-ի փորձագետների խորհրդի նիստում որոշում կայացվեց խստիվ հետևել տերևաթափից գոյացած հսկայական կույտերը չայրելու վերաբերյալ և փոխքաղապետը, որը փորձագետների խմբի անդամ է, վերցրեց պատասխանատվությունը իր վրա: Նշեմ, որ նա իր խոստումը հիանալի կատարում է առ այսօր: Դեռևս տերևաթափը լրիվ չի ավարտվել: Վերջին հանդիպումը կկայանա նոյեմբերի վերջին, կքննարկվի տարեկան աշխատանքային պլանների կատարումը և հետագա անելիքները:

2. *Մրագրի իրագործումն ըստ դրված նպատակների,*

2.1 *ՆՊԱՏԱԿ 1*

Համայնքներում կազմակերպում է «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Օրինուսի կոնվենցիա) և շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող այլ միջազգային պայմանագրերի լուսաբանման աշխատանքները՝ պարզաբանելով դրանցով երաշխավորված հասարակայնության իրավունքները:

2.1.1 *կատարված գործողություններ,*

Կապանի թիվ3, թիվ6, երիտասարդ լիդերների դպրոցի, Քաջարանի թիվ1 և թիվ 2 դպրոցների աշակերտների, ԵԳՀ Կապանի մասնաճյուղի ԵՊՃՀ Կապանի մասնաճյուղի ուսանողների համար կազմակերպվել է դասընթացներ Օրինուսի կոնվենցիայի և շրջակա միջավայրի պահպանությանը առնչվող այլ տեղեկատվություն: կատարված գործողություններ,

2.1.2 *Ձեռք բերված արդյունքներ:*

92 դպրոցականները և 45 ուսանողները ստացան Օրինուսի կոնվենցիայի և այլ միջազգային պայմանագրերի վերաբերյալ լուսաբանված տեղեկատվություն, որոնցով երաշխավորված է հասարակության իրավունքները, միաժամանակ նրանք ստացան բնապահպանական մտածելակերպ և վարքագիծ ձևավորող ու զարգացնող, անձի էկոլոգիական դաստիարակության և էկոկուլտուրայի տարրեր:

/գործողությունները կամ արդյունքները կարող են լինել մի քանիսը, կամ չլինել, ավել լինելու դեքում ավելացնել համարներ, /օր. 2.1.3, 2.1.4 և ..., չլինելու դեպքում բացատրել թե ինչու չի եղել, սա վերաբերում է բոլոր նպատակային կետերին/

2.2 ՆՊԱՏԱԿ 2

Հետևում է պետական մարմինների կողմից շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին և դրանց ընդունման վաղ փուլում, հասարակայնության պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով, տարածում է համապատասխան տեղեկատվությունն ու կազմակերպում քննարկումներ (կլոր սեղաններ, բանավեճեր և այլն):

2.2.1 կատարված գործողություններ,

13.03 Հանրային քննարկում “Պահպանվող տարածքների համակարգի զարգացումը” ծրագիրը, որը իրականացվում է ՄԱԶԾ ԳԷՀ աջակցությամբ ՀՀ բնապահպանության նախարարության և “Բնության համաշխարհային հիմնադրամի” կողմից:

2.2.2 Ձեռք բերված արդյունքներ:

Շահառու 8 համայնքների և մյուս մասնակիցների կողմից ստեղծված աշխատանքային խումբը 10-օրյա ժամկետում կներկայացնի առաջարկություններ, կանոնադրությունում փոփոխություններ կատարելու համար, սահմանների և իրավասությունների հստակեցման վերաբերյալ, որոնք պարունակում են ռիսկեր նշված համայնքների համար:

2.2.3 կատարված գործողություններ,

09.08 "Խուստույի" և "Զանգեզուր" պետական արգելավայրերի ստեղծելու-ընդլայնելու ծրագրի ընթացքում առաջացած խնդիրների, ՀՀ Կառավարության որոշման նախագծում տեղ գտած մի քանի կետերի քննարկում, որոնք սահմանափակում են համայնքի բնակչության մուտքը իրենց կողմից տրամադրվելիք տարածքներ. Օրինակ տարածք մտնելու համար պետք է ունենան անցաթուղթ, կամ տրակտորը այդ տարածքով անցնելուց ճանապարհից չպետք է դուրս գա և այլն, այսինքն այդ տարածքները, որոնք պետք է տրամադրի համայնքը, որոնք այսօր օգտագործում է, այլևս նա առանց թույլատրության չի կարող մտնել, իսկ ցանքս անելու մասին խոսելը անիմաստ է:

2.2.4 Ձեռք բերված արդյունքներ:

Բնապահպանության նախարարության կողմից ծրագրի պատասխանատուն խոստացավ նշված խնդիրները ներկայացնել ՀՀ Կառավարություն: Դեռևս Կառավարությունը նախագիծը չի քննարկել:

2.2.5 կատարված գործողություններ,

18.07 Աշխատանքային հանդիպում Օրինու կենտրոնում Կապանի բնապահպանական խնդիրներով զբաղվող ՀԿ-ների և ԵԱՀԿ-ի կողմից ստեղծված փորձառու արհեստավարժ

փորձագետների հետ: Բարձրացվեցին հարցեր խմելու ջրի ջրահավաք ավազանով նոր կառուցված ճանապարհի, տարաքծում կատարվող հանքավայրի լեռնահետախուզական աշխատանքների, Կապան քաղաքի մերձակայքում գտնվող լքված հանքերի, որոնք բաց են և լուրջ վտանգ են հանդիսանում երեխաների և ընտանի կենդանիների համար, անձրևոտ օրերին հանքից հոսող ծանր մետաղներով աղտոտված ջրերի վերաբերյալ, որոնք հոսելով նույնիսկ շենքերի բակերով, որտեղ երեխաները խաղում կամ հեծանիվ են քշում, լուրջ վտանգ է երեխաների առողջությանը: Ներկայացվեց նաև Սյունիք համայնքի ռոտզման ջրի վերաբերյալ: Ջրառը, որը վերցվում է ոչ նախատեսված տեղից/ջրագծի որոշ հատվածի վթարի պատճառով/, լցվում է ՋՊՄԿ-ի պոչամբարից եկող թափոնների մեխանիկական նստվածքից եկող ջրերը: ՀՀ Ազգային Ակադեմիայի էկոլոգանոսֆերային հետազոտական կենտրոնի մոնտորինգի արդյունքներով 7-8 տեսակի բանջարաբոստանային կուլտուրաներ այդ ջրերից ռոտզման պատճառով դրանց օգտագործումը համարվել է վտանգավոր, քանի որ քրոմի, նիկելի, սնդիկի, ցինկի, պղնձի և մոլիբդենի պարունակությունները այդ սննդատեսակներում բազմաթիվ անգամ գերազանցում են ՄԹԿ-ները:

2.2.6 Ձեռք բերված արդյունքներ:

Աշխատանքային խումբը եղավ տեղերում, ուսումնասիրեց խնդիրները: Ակտիվ ՀԿ-ները ստացան տեղեկատվություն Կապանի բնապահպանական խնդիրների վիճակի լուծման ուղիների, նրանց իրավաբանական ճիշտ ներկայացման վերաբերյալ:

2.2.7 կատարված գործողություններ,

19.07 Օրհուս կենտրոնում փորձառու արհեստավարժ մասնագետներից կազմված բնապահպանական աշխատանքային խումբը հանդիպեց ՀՀ Սյունիքի փոխմարզպետ Վաչե Գրիգորյանի հետ

2.2.8 Ձեռք բերված արդյունքներ:

Ներկայացվեց "Սյունիք" համայնքի "Մայր առու" ջրագծի վերականգնման և լքված հանքերից ծանր մետաղներ պարունակող հանքաջրերի վիճակը: Փոխմարզպետը առաջին խնդրի վերաբերյալ հավաստիացրեց, որ կլուծվի մոտ ապագայում, իսկ երկրորդ խնդիրը ունի լուրջ ուսումնասիրման կարիք:

2.3 ՆՊԱՏԱԿ 3

Մասնակցում է հասարակական լուսմներին և տարածում դրանց ընթացքի, ինչպես նաև արդյունքում կայացված որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը:

2.3.1 կատարված գործողություններ,

04.04 Հասարակական լուսմ նյութերը նախօրոք ստանալով հրավիրել է ակտիվ ՀԿ-ներին ծանոթացել <<ՀՀ Սյունիքի մարզի Կապան և Աճանան համայնքների տարածքում 21,6 հա ՀԱ տարածքի անտառի վերականգնում>> աշխատանքային նախագծին:

2.3.2 Ձեռք բերված արդյունքներ:

Ակտիվորեն մասնակցել են ՀԿ-ների հետ քննարկումներին, կատարել առաջարկություններ, որոնք պատվիրատուն և նախագծողը խոստացել են ուսումնասիրել և նոր որոշում կայացնելու դեպքում խոստացան տեղեկացնել:

2.3.3 կատարված գործողություններ,

24.09 Հասարակական լսում նյութերը նախօրոք ստանալով հրավիրել է Կապանի երկարամյա այդ բնագավառում աշխատած, փորձառու երկու մասնագետների: Ծանոթացել են "Հայջրմուղ-կոյուղի" ՓԲԸ-ի կողմից Կապան քաղաքի ջրամատակարարման ցանցի վերանորոգման շրջակա միջավայրի վրա ազդեցության" նախագծի հասարակական լսման նյութերը:

2.3.4 Ձեռք բերված արդյունքներ:

Կատարվել են առաջարկություններ, որոնք ունեն ուսումնասիրման կարիք: Որոշում կայացնելուց խոստացան տեղեկացնել:

2.3.5 կատարված գործողություններ,

10-ից 12.06 Ծանոթացում <<Գեղանուշի պոչատարի վթարային դատարկման ավազանների հոսքուղու>> նախագծում երեք ՀԿ-ի և լեռնային ճարտարագետի մասնակցությամբ:

2.3.6 Ձեռք բերված արդյունքներ:

Կատարվեց նախագծի քննարկում, թերությունների վերհանում: 12.06 հասարակական լսման ժամանակ կատարվեցին առաջարկություններ:

2.3.7 կատարված գործողություններ,

01.03 "Կապանը առանց աղբի" /ծրագրի մեկնարկային քայլ/ "ԴԳՄՔ" ՓԲԸ համագործակցությամբ:

2.3.8 Ձեռք բերված արդյունքներ:

Ընդունվեց նաև Օրհուս կենտրոնի խոսքից գործին անցնելու առաջարկությունը կազմակերպելու համաքաղաքային շաբաթօրյակներ:

Մարտի 22-ին, 23-ին քաղաքապետարանի կողմից կազմակերպվեց համաքաղաքային շաբաթօրյակ: Մաքրվեցին բակեր, փողոցներ, կանաչ գոտիներ, տնկվեցին 200-ից ավելի ծառեր: Ես այդ օրը Շահումյան փողոցում տնկեցի երեք ծառ:

2.3.9 կատարված գործողություններ,

21.05 Աշխատանքային հանդիպում "ԽՈՒՍՏՈՒՓ" բնապահպանական ՀԿ-նախագահ Վ.մարտիրոսյանի, "Խուստուփ փրկարարական ջոկատ" ՀԿ-նախագահ Ա. Հարությունյանի,

Կապանի փոխքաղապետ Ռ. Մարգարյանի, Սյունիքի մարզային ԵԱՀԿ ԾԻԳ գրասենյակի համակարգող Ա.Շահբազյանի, ԳԷՖ ՓԴԾ համակարգող Հ.Ղազարյանի հետ:

2.3.10 Ձեռք բերված արդյունքներ:

Կայացվեց որոշում կազմելու փոքր դրամաշնորհային ծրագիր "Կապան քաղաքի Ողջի գետի ջրերի ծանր մետաղներով աղտոտման կանխարգելում մերձափնյա էկոհամակարգի վերականգնման միջոցով": Փոխքաղաքապետը երաշխավորեց, որ քաղաքապետարանը կաջակցի աշխատուժով և տեխնիկայով: Օրհուս կենտրոնը մասնակցեց ծրագրի կազմմանը: 12.11 Սկսվեց ծրագրի 2-րդ փուլը: 10 դեսպանատների, միջազգային կազմակերպությունների ներկայությամբ սկսվեց ծառատունկը, կտնկվեն փոշնի, դրախտածառ, գիհի և այլ թփատեսակներ, մոտ 3500 հատ, կկանխվի դեգրադացիան, կվերականգնվի էկոհամակարգը, դարավանդներ կառուցմամբ կկանխվի հեղեղատները և ծանր մետաղներով աղտոտված ջրերի հոսքը քաղաքի փողոցներ և Ողջի գետ, կկանխվի քաղաքի մթնոլորտային օդի աղտոտումը ծանր մետաղներով:

2.3.11 կատարված գործողություններ,

"Աշխատանքային հանդիպում" "Խուստուփ" բնապահպանական ՀԿ-ի նախագահ Վ. Մարտիրոսյանի, "Դավիթբեկյան ուխտեր" Երիտասարդական ՀԿ խորհրդի նախագահ Ռ. Մարգարյանի և "Նորաշենիկ" համայնքի ղեկավար Ռ. Ավանեսյանի հետ համատեղ դրամաշնորհային ծրագիր իրականացնելու համար/Օրհուս կենտրոնը մասնակցել է ծրագրի կազմմանը, և ծրագրի իրականացման փուլում կատարելու է համայնքների բնակչության և աջակերտների էկոկրթություն/:

2.3.12 Ձեռք բերված արդյունքներ:

ԳԷՀ ՓԴԾ-ն կայացրեց որոշում "ՀՀ Սյունիքի մարզի Նորաշենիկ համայնքի դեգրադացված հողերի և ագրոկենսաբազմազանության վերականգնում" ծրագիր իրականացնել "Մային գյուղ" տարածքի համար: Կազմվեց ծրագիր "Մային գյուղ" 5հա տարածքի համար: Տնկել 3500ծառ վայրի տանձենի և 3000ծառ կովկասյան լորենի: 5-8 տարի հետո, կկանգնեցվի 5հա հողերի դեգրադացիան, կվերականգնվի ագրոկենսաբազմազանությունը, կկարգավորվի վերգետնյա ջրերը, կնպաստի կենդանիների պոպուլյացիայի աճին, կավելանա ածխածնի պաշարները և բնակչությունը կունենա լրացուցիչ եկամտի աղբյուրներ` վայրի տանձից կպատրաստի մուրաբա, կկտրի չիր, կթորի տանձի օդի և լորենին կտա որակյալ մեղր : 01.11 Սկսվել է ծառատունկը, 15.11-ի դրությամբ տնկվել է 3000-ի ավելի ծառ:

2.3.13 կատարված գործողություններ,

01.07 Տեղեկատվական հանդիպում ուսանողությանը Կապանում ակտիվ գործող ՀԿ-ների հետ և նրանց գործունեությանը` կատարվող ծրագրերին ՁԼՄ-ների մասնակցությամբ

2.3.14 Ձեռք բերված արդյունքներ:

Կապանի Օրհուս կենտրոնում ներկայացվեց ԳԷՀ ՓԴԾ –ի կողմից հաստատված "Կապան քաղաքի Ողջի գետի ջրերի ծանր մետաղներով աղտոտման կանխարգելում մերձափնյա էկոհամակարգի վերականգնման միջոցով" և "ՀՀ Սյունիքի մարզի Նորաշենիկ համայնքի դեգրադացված հողերի և ագրոկենսաբազմազանության վերականգնում" ծրագրերը: Երկարատև համատեղ աշխատանքը պսակվեց հաջողությամբ:

2.4 ՆՊԱՏԱԿ 4

Կազմակերպում է հասարակայնության և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությանը նպաստող միջոցառումներ (համայնքի տարածքում առկա բնապահպանական խնդիրների վերհանման ու համատեղ ուժերով դրանց լուծումներ տալու վերաբերյալ քննարկումներ, շաբաթօրյակներ և այլն):

2.4.1 կատարված գործողություններ,

2.4.2 Ձեռք բերված արդյունքներ:

2.5 ՆՊԱՏԱԿ 5

Շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ պատասխանատու վարքագծի ձևավորան գործընթացին խթանելու նպատակով՝ համայնքների բնակչության և համայնքային կազմակերպությունների համար կազմակերպում և անցկացնում է էկոկրթական դասընթացներ:

2.5.1 կատարված գործողություններ,

15.03 ՀԱ Կապանի անտառտնտեսության և Սյունիքի մարզպետարանի հետ համատեղ կազմակերպվեց դասընթաց "Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ Հայաստանի լեռնանտառային էկոհամակարգերի հարմարվողականության բարձրացում» ՄԱԶԾ ԳԷՀ-ի ծրագրի շրջանակներում «Հայաստանի անտառներում տարածված վնասակար օրգանիզմները և դրանց դեմ պայքարի միջոցառումների բարելավման ուղիները» թեմայով :

2.5.2 Ձեռք բերված արդյունքներ:

Կապանի անտառտնտեսության և "Արևիկ" ազգային պարկի 19 աշխատակիցներ ստացան Հայաստանի անտառներում տարածված վնասակար օրգանիզմների և դրանց դեմ պայքարի միջոցառման վերաբերյալ տեղեկատվություն և գրականություն, ինչպես նաև ծանոթացան շրջակա միջավայրի պահպանության ՀՀ Օրենքներին և միջազգային կարևոր փաստաթղթերին, Օրհուսի կոնվենցիային, որոնք հանդիսանում են հասարակայնության իրավունքների երաշխիքը:

2.5.3 կատարված գործողություններ,

Օգոստոսի 25-ից 29-ը Օրհուս կենտրոնում կազմակերպվեց Մյունխի մարզպետարանի հետ համատեղ կազմակերպվեց վերապատրաստման դասընթացներ Կապանի տարածաշրջանի համայնքային 35 աշխատողների համար: Ծրագրում ընգրկվեց նաև բնապահպանական, շրջակա միջավայրի պահպանության, տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքները, Օրհուսի կոնվենցիան և այլ միջազգային կարևոր փաստաթղթեր:

2.5.4 Ձեռք բերված արդյունքներ:

35 համայնքային աշխատողներ հանձնեցին քննություններ և ստացան աշխատանքային մասնագիտական որակավորման բարձրացում և տեղեկատվություն բնապահպանության և շրջակա միջավայրի պահպանության ՀՀ Օրենքներից և միջազգային կարևոր կոնվենցիաներից:

2.6 ՆՊԱՏԱԿ 6

Կազմակերպում է Կենտրոնի ամենօրյա աշխատանքները, ապահովում է Կենտրոնի գույքի նպատակային օգտագործումն և պահպանումը: Կազմում, անհրաժեշտության դեպքում նաև լրամշակում և ներկայացում է Կենտրոնի տարեկան աշխատանքային պլանի նախագիծը, կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններն ու ֆինանսական փաստաթղթերը:

2.6.1 կատարված գործողություններ,

25.01 Հրավիրվեց փորձագետների առաջին նիստը: Հաստատվեց կազմը, ներկայացվեց աշխատանքային պլանը, գործունեության ուղղությունների նախնական ցանկը, որոնք պետք է իրականացվեն 2013թվականին, միաժամանակ նշվեց, որ աշխատանքային պլանում միշտ էլ կարող են տեղի ունենալ փոփոխություններ, կազմակերպել նոր միջոցառումներ, հանդիպումներ, սեմինարներ, դասընթացներ, հանրային քննարկումներ և այլն:

2.6.2 Ձեռք բերված արդյունքներ:

Հաստատվեց փորձագետների 2013թվականի կազմը, կենտրոնի աշխատանքային պլանը:

3. Ծրագրի ֆինանսական հաշվետվություն: /կարող էք տեսնել կից ֆայլով/
4. Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները, համագործակից կառույցներն ու փորձագետները:

ԵԱՀԿ

Մարզպետարաններ

Քաղաքապետարաններ /ՏԻՄ-եր/

Նախարարություններ

ՀԿ-ր

Քաղաքացիներ

ԶԼՄ-ներ

/Եթե էլի կան գրեք բոլորը/

5. Ծրագրով ձեռք բերված փաստացի արդյունքեր, քաղած դասեր և եզրակացություններ

92 դպրոցականները և 45 ուսանողները ստացան Օրհուսի կոնվենցիայի և այլ միջազգային պայմանագրերի վերաբերյալ լուսաբանված տեղեկատվություն, որոնցով երաշխավորված է հասարակության իրավունքները, միաժամանակ նրանք ստացան բնապահպանական մտածելակերպ և վարքագիծ ձևավորող ու զարգացնող, անձի էկոլոգիական դաստիարակության և էկոկուլտուրայի տարրեր:

35 համյնքային աշխատողներ ստացան տեղեկատվություն բնապահպանության և շրջակա միջավայրի պահպանության ՀՀ Օրենքներից և միջազգային կարևոր կոնվենցիաներից:

Կապանի անտառտնտեսության և "Արևիկ" ազգային պարկի 19 աշխատակիցներ ստացան ծանոթացան շրջակա միջավայրի պահպանության ՀՀ Օրենքներին և միջազգային կարևոր փաստաթղթերին, Օրհուսի կոնվենցիային, որոնք հանդիսանում են հասարակայնության իրավունքների երաշխիքը:

Կապանի համայնքային 35 աշխատողներ ծա

Կապանի Օրհուս կենտրոնի ձեռք է բերել ավելի ու ավելի համախոհներ, համագործակցողներ, որոնք վառ արտահայտվում են հրատապ խնդիրներին անմիջական արձագանքմամբ: Դրա վառ ապացույցն է օգոստոսի 30-ին Շահումյանի հանքավայրի բաց եղանակով հնարավոր շահագործման Կապանցիների դիրքորոշման արձագանքին: Բոլոր հրավիրվածները մեկ մարդու պես ներկայացան և արդյունքը սպասել չտվեց: Կայացվեց որոշում "Դանդի Փրեշս Մեթալս Կապան" ՓԲԸ-ի կողմից, որ հանքավայրը շահագործվելու է միայն փակ եղանակով: 2011, 2012, 2013 թվականների դեմ առ դեմ դիսկուսիաները, որ փորձում էին ապացուցելու ժամանակակից տեխնոլոգիաներով անվտանգ բաց մշակման վերաբերյալ, ավարտվեց: Սեպտեմբերի 3-ին "Դանդի Փրեշս Մեթալս Կապան" ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Հրաչ Զաբրայանի հայտարարությունից հետո Մենք սեղմեցին մեկս մյուսի ձեռքերը: Դա վերջն էր բաց եղանակով հանքավայրի արդյունահանմանը:

Ընթացքի մեջ է "Կապան քաղաքի Ողջի գետի ջրերի ծանր մետաղներով աղտոտման կանխարգելում մերձափնյա էկոհամակարգի վերականգնման միջոցով" ծրագիրը: Մինչև նոյեմբերի վերջը կավարտվի ծառատունկը, կտնկվեն փռշնի, դրախտածառ, գիհի և այլ թփատեսակներ, մոտ 3500 հատ, կկանխվի դեգրադացիան, կվերականգնվի էկոհամակարգը, դարավանդներ կառուցմամբ կկանխվի հեղեղատները և ծանր մետաղներով աղտոտված ջրերի

հոսքը քաղաքի փողոցներ և Ողջի գետ, կկանխվի քաղաքի մթնոլորտային օդի աղտոտումը ծանր մետաղներով:

6. Ծրագրի շրջանակներում ի հայտ եկած դժվարություններ և նոր լուծումներ:

Ֆինանսական միջոցների սղություն:

7. Ծրագրի գնահատում և շարունակականություն

Ծրագիրը շատ արդիական է, երանի այն օրը, երբ շրջակա միջավայրի պահպանության և բնապահպանական խնդիրներ չլինեն և Օրհուս կենտրոնների փակվեն:

8. Վիճակագրական մանրամասն տվյալներ Օրհուս Կենտրոնների կողմից իրականացված միջոցառումների և մատուցված ծառայությունների վերաբերյալ:
/կարող եք տեսնել կից ֆայլով, այսինքն այստեղ կցելու եք Ձեր Statistics Excel-ի ֆայլը//

9. Հաշվետվությանը կից ներկայացվող նյութեր (լուսանկարներ, տեսաձայնային նյութեր, հրապարակումների և շնորհակալական նամակների օրինակներ, հաջողված դեպքեր և պատմություններ և այն):

Կապանի Օրհուս Կենտրոնի համակարգող Աշոտ Ավագյան

E:mail

Հեռ: